



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.  
21-րդ դարի մարտահրավերներ  
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:  
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:  
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

**ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

2017 թ., նոյեմբերի 22-24

**Երևան 2018**

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65  
Տ 778

Հրատարակվում է  
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհրդի նախագահ՝**

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

**Խմբագրական խորհուրդ՝**

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ  
**ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԽՈՐԵՆ ՄԻՒԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ  
**ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և  
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,  
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մատչում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ  
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ներից կարելի է համարել բազմաթիվ արտադրությունների հնացածությունը, ՀՆԱ-ի նկատմամբ ՕՈՒՆ-երի ցածր մակարդակը, գլոբալ արժեքի ստեղծման շղթաներում մասնակցության մակարդակի բարձրացման ինչպես ազգային, այնպես էլ ԵԱՏՄ միասնական ռազմավարության բացակայությունը: Հոդվածում առաջարկվում են ԵԱՏՄ անդամ երկրների ներդրումային համագործակցության հայեցակարգային մոտեցումներ՝ գլոբալ արժեքի շղթաներում վերընթացից վարընթաց կապերին անցման համար:

SERGEY IGNATOV

## PROSPECTS AND WAYS TO INCREASE EFFICIENCY OF INTEGRATION PROCESSES AND FDI INVOLVEMENT IN THE ECONOMY OF ARMENIA

**Key words:** *foreign direct investment (FDI), global value chains (GVC's), EAEU value chains, forward linkages and backward linkages in GVC's*

*Armenia and other EAEU member countries, as the tendencies show, for the last three decades, being at different degrees of power involved in the GVC, do not have the same economic benefits as some developing countries. The main reasons can be considered the technological backwardness of many industries, low levels of FDI as a percentage of GDP, the absence of both national and unified for the EAEU, the strategy of increasing the level of GVC participation. Due to the fact that the accumulated FDI in the country and its level of participation in the world value chains are highly dependent on each other, the article suggests conceptual approaches for the purposeful investment cooperation of the EAEU member countries, to accelerated transition from forward linkages to the backward linkages in GVC's*

ԲԵԼԱ ԽԱԼԱՓՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

## ՆՈՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ՓՈՐՁԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

**Հիմնաբառեր.** *նոր հանրային կառավարում, մենեջերիալիզմ, վարչական բարեփոխումներ, հանրային ծառայություն, ապակենտրոնացում, ֆինանսական ճգնաժամ, հիմնարար սկզբունքներ*

**New Public Management (NPM)-ը՝** նոր հանրային կառավարումը (ՆՀԿ) կամ «նոր մենեջերիալիզմը», որպես հանրային կառավարման նոր մոդել, ծնունդ է առել 1980-ական թվականներին մի շարք անգլո-սաքսոնական երկրների հասարակական հատվածի բարեփոխման փորձից և մեծ տարածում է ստացել ԱՄՆ-ում՝ խորհրդապուր և լրագրող Դ. Օսթրոնի և մենեջեր Տ. Գեբլերի «Կառավարության վերակառուցումը» (“Reinventing

Government”) աշխարհային (1992 թ.) լույս տեսնելուց հետո: Այս գաղափարները սկսեցին ինտենսիվ կերպով կիրառվել Մեծ Բրիտանիայում, Կանադայում, Նոր Զելանդիայում, ԱՄՆ-ում և իրենց հետևորդներն ունեն Ֆրանսիայում, Գերմանիայում, Ճապոնիայում, անցումային և զարգացող տնտեսություններով երկրներում: ՆՀԿ-ն արդյունավետ գործող գաղափարների խումբ է, որը հայտնի է որպես հանրային կառավարման գիտության մեջ հանրային քաղաքականությունը և հանրային կառավարումը կապող գաղափարական օղակ: ՆՀԿ-ն ձգտում է կառուցել իշխանության մարմինների ավելի մարդասիրական և ժողովրդավարական համակարգ անհրաժեշտ ինստիտուտների կառուցմամբ և պետական ծառայողների մասնագիտական ունակությունների ամրապնդմամբ, որոնք կնպաստեն հասարակության մեջ սոցիալական արդարության նպատակների իրագործմանը:

Նոր հանրային կառավարումը (ՆՀԿ) կամ «նոր մենեջերիզմը», իբրև բարեփոխման շարժում, ինչպես նաև որպես գիտական դպրոց, ծնունդ է առել 1980-ական թվականներին մի շարք անգլո-սաքսոնական երկրների հասարակական հատվածի բարեփոխման փորձից և մեծ տարածում է ստացել ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում, Կանադայում, Նոր Զելանդիայում: Այնուհետև այդ գաղափարները սկսեցին ինտենսիվ կերպով կիրառվել նաև անցումային և զարգացող տնտեսություններ ունեցող, ինչպես նաև ասիական մի շարք երկրներում: Շարժումն իր հաղթական ուղին մեկնարկեց վարչապետ Մարգարետ Թետչերի պաշտոնավարման տարիներին՝ 1979 թ. և Ռոնալդ Ռեյգանի նախագահության օրոք՝ 1980 թ.: ՆՀԿ գիտական և քաղաքական շարժման գլխավոր նպատակն ավանդական հանրային կառավարման կառուցակարգերի վերափոխումն էր՝ ավելի արդյունավետ կերպով գործառույց, հեշտորեն հարմարվող և, դրանցով էլ պայմանավորված, էլ ավելի արդյունավետ համարվող գործընթաց զարգացնելու համար:

1970-ական թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն առաջ քաշեց մի շարք գաղափարներ, որոնց նպատակն էր ստեղծել մի այնպիսի կառավարություն, որը «կգործի ավելի լավ և ավելի էժան»<sup>1</sup>: Տիրում էր համաշխարհային տնտեսական անկում, որի գլխավոր պատճառներից մեկը 1973 թ. նավթային ճգնաժամն էր: Իրականացված բոլոր միջոցառումները կարելի է համարել «տնտեսական ռացիոնալիզմ», որը տնտեսական վերլուծության վրա հիմնված կառավարման խնդիրների լուծման նոր փորձ է: Հանրային կառավարման մասնագետները սկսեցին վերակառուցել իրենց բյուրոկրատական տեսությունները, ապակենտրոնացնել որոշումների կայացումը, վերանայել և պարզեցնել իրենց կազմակերպությունների առաքելությունն ու գործունեությունը: Այս գաղափարները հատկապես հաջողությամբ տեղ են գտել Դեյվիդ Բ. Օսբորնի և Թեդ Գեբլերի «**Կառավարության վերակառուցումը**» (Reinventing Government an "American Perestroika." Like the Soviet version, 1992) աշխատության մեջ<sup>2</sup>:

<sup>1</sup> Minogue, M. 1998. "Changing the State: Concepts and Practice in the Reform of the Public Sector" in Minogue, M.; C. Polidano; David Hulme (eds.). Beyond the New Public Management. Cheltenham: Edward Elgar.

<sup>2</sup> Osborne D., Gaebler T., 1992. Reinventing Government: How the Entrepreneurial Spirit is Transforming the Public Sector. Addison-Wesley: Reading, MA.

Ռոբերտ Բ. Օսթորնը և Թեդ Գեբլերը ներկայացրին բարենորոգումների 10 սկզբունք, որոնք առայսօր շարունակում են մնալ որպես «նոր հանրային կառավարման սկզբունքներ»: Նրանք հույս ունեին, որ այդ սկզբունքները կծառայեն որպես կառավարման նոր հայեցակարգային կառուցվածք՝ համապատասխան գործընթացը ձևափոխելու համար և համարում էին, որ իրենց մոդելը համապիտանի է և՛ հանրային, և՛ մասնավոր, և՛ շահույթ չհետապնդող ոլորտներում: Ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ ՆՀԿ մոդելը, տեսական և կիրառական առումներով, պետք է հարմարեցվի այն երկրի պահանջներին և կարիքներին, որտեղ մշակվում և իրականացվում է դա: Սակայն, գոյություն ունեն առանցքային հարցեր, ինչպես նաև շարժիչ ուժեր (տնտեսական, քաղաքական, սոցիալական, մտավոր, գաղափարախոսական, տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաներ և այլն), որոնք անփոփոխ են՝ անկախ երկրից, ինչպես նաև ի հայտ են գալիս ՆՀՄ բարեփոխումների այնպիսի դրդապատճառներ, որոնք առկա են յուրաքանչյուր երկրում<sup>1</sup>:

Միջազգային համատեքստում «նոր հանրային կառավարման» լավագույն օրինակ կարելի է համարել Նոր Զելանդիայի վարչական բարեփոխումները: Զգտելով հասնել արդյունավետ հանրային կառավարման բարձր մակարդակի՝ պետությունը հանրային գործառույթների մի մասն ապակենտրոնացրեց կամ լիազորությունների մի մասը փոխանցեց տեղական ինքնակառավարման մարմիններին, աշխատավարձի համակարգն այնպես վերափոխեց, որ պաշտոնյաները ձգտեն արդյունավետ գործունեություն իրականացնել, պետական հաստատությունների գործունեության արդյունավետության գնահատման նոր չափանիշներ հաստատեց, գերատեսչական համակարգը վերափոխեց այնպես, որ հաշվետու լինի կառավարությանը:

Հետագայում բարեփոխումների ալիքը տարածվեց նաև Կանադայում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում և արդյունքում աշխարհը տեղեկացավ, որ հաստատվում են հանրային կառավարման նոր դերեր և որոնվում են նոր չափանիշներ ու չափորոշիչներ:

Փորձը ցույց է տալիս, որ ապակենտրոնացված երկրները իրականացվող բարեփոխումների ծավալներով և միատարրությամբ զիջում են կենտրոնացված պետություններին, որտեղ ավելի մեծ է ներգրավվածությունը հանրային ծառայությունների մատուցման ոլորտում (առողջապահություն, կրթություն):

Կենտրոնացված-ապակենտրոնացված համադրության մեջ կարևոր փոփոխական է կենտրոնական կառավարման մարմիններում աշխատող հանրային ծառայողների թիվը: Ծառայությունների ոլորտում հենց Նոր Զելանդիան և Մեծ Բրիտանիան լայնածավալ բարեփոխումներ իրականացրին այն դեպքում, երբ Նոր Զելանդիայում կենտրոնական կառավարման ոլորտի աշխատակիցների թիվն ընդհանուրի 90%-ն էր, Մեծ Բրիտանիայում՝ 48%-ը: Հարկ է նշել, որ կենտրոնացված և մեծամասնական վարչակարգեր ունեցող Մեծ

<sup>1</sup> Դենհարդ Ռոբերտ Բ., Հանրային կազմակերպության տեսություններ: Չորրորդ հրատարակություն, Ռուսական և արևելաեվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, Արիզոնայի նահանգային համալսարան, 2006, էջ 186: Sowardi Tolofari" New Public Management and Education" Policy Futures in Education, Volume 3, Number 1, 2005 p <http://firgoa.usc.es>

Բրիտանիայում և Նոր Զելանդիայում բարեփոխումներն ավելի խոր ու ծավալուն էին, քան ԱՄՆ-ում և Կանադայում<sup>2</sup>:

Դ. Քեթլն աշխարհում իրականացված բարեփոխումները ներկայացնում է 2 մոդելի շրջանակում՝ վեսթմինստերյան (Westminster reforms) և ամերիկյան (American-style reforms): Առաջին մոդելի շրջանակներում առաջատարները Մեծ Բրիտանիան և Նոր Զելանդիան են, իսկ երկրորդ մոդելի շրջանակներում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները:

Հանրային կառավարման բարեփոխումների արդյունքում Մեծ Բրիտանիայում և Նոր Զելանդիայում ստեղծվեցին նոր ստորաբաժանումներ, որոնք մասնագիտացած էին որոշակի հանրային ծառայությունների մատուցման ոլորտում: Մեծ Բրիտանիայում այդպիսի կառուցվածքային միավորներ են Next Step Agency (NSA)-ն, իսկ Նոր Զելանդիայում՝ State-owned enterprises (SOEs)-ը: Միաժամանակ NSA-ն և SOEs-ը համարվում են «մասնավորեցման հավանական թեկնածուներ», այսինքն՝ ծառայությունների մատուցումը կարող է փոխանցվել պետականից մասնավոր ձեռնարկությունների ոլորտ: Հարկ է նշել, որ Մեծ Բրիտանիայում 1984-1987 թթ. մասնավորեցվեց հանրային ընկերությունների 1/3-ը, այդ թվում՝ հեռահաղորդակցության ընկերություններ, պողպատածուլման ձեռնարկություններ, գազի արդյունաբերություն, էլեկտրաէներգետիկա և այլն: Նոր Զելանդիայում մասնավորեցվեցին ավելի քան 20 պետական ընկերություններ (հեռախոսակապ, փոստային ծառայություն, ավիափոխադրման և նավթային ընկերություններ): Այդուհանդերձ, մասնագիտացումը բերում է վերահսկողության բարդացման: Այսինքն՝ NSA-ի և SOEs-ի ստեղծումը հանգեցնում է վերահսկողության դժվարացման: Սակայն, այդ խնդրի լուծումը Մեծ Բրիտանիայում և Նոր Զելանդիայում պայմանագրային սկզբունքների ներմուծումն է: Պայմանագիրը կնքվում է NSA և SOEs ղեկավարի և համապատասխան նախարարի միջև բանակցությունների արդյունքում, որտեղ նշված են լինում հատկացվող ֆինանսական միջոցների, արդյունքների և իրականացման ժամանակահատվածի մասին դրույթները:

Ապակենտրոնացման համատեքստում, դիտարկելով այս պետությունների առանձնահատկությունները, նկատելի է, որ Մեծ Բրիտանիան և Նոր Զելանդիան, լինելով ՆՀՄ հետևորդներ, իրենց բարեփոխումներում մեծ դեր են տվել լիազորությունների փոխանցման ցածր մակարդակի մենեջերներին: Բարեփոխումների արդյունքում այս պետություններում իրականացվեցին մեծածավալ վարչական ապակենտրոնացման քայլեր. թե՛ Մեծ Բրիտանիայում, թե՛ Նոր Զելանդիայում ներմուծվեց հանրային ծառայությունների մատուցման համար տենդերի իրականացման գաղափարը, որին մասնակցում էին ինչպես պետական ոլորտի կազմակերպությունները, այնպես էլ մասնավոր հատվածի ընկերությունները: Ըստ էության, այս պետություններում գործում է մրցակցային ապակենտրոնացումը: Մեծ Բրիտանիայում և Նոր Զելանդիայում առավել տարածված է աստիճանակարգային վերահսկումը: NSA-ն և SOEs-ը ղեկավարները ենթակա են նախարարին, սակայն օպերատիվ ղեկավարման մեջ նրանք ունեն անկախություն, ինչպես նաև շուկայական վերահսկման դրսևորումներ: Այն դեպքում, երբ NSA և SOEs չեն կարողանում մատուցել համապատասխան հանրային ծառայություններ, ապա նրանք մասնավորեցվում

<sup>2</sup> Christopher Pollitt, Geert Bouckaert Public Management Reform: A Comparative Analysis chapter.

են, և այդ ծառայությունների մատուցումը տրվում է մասնավոր հատվածի ընկերություններին, այսինքն՝ գործում է ազատ մրցակցության սկզբունքը<sup>1</sup>:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ Մեծ Բրիտանիայում և Նոր Զելանդիայում իրականացված՝ հանրային հատվածի բարեփոխումները, հետագծերի տեսանկյունից, էականորեն չեն տարբերվում: Դրա պատճառն այն է, որ այս երկու երկրները, լինելով վեսթմինստերյան մոդելի առաջատարներ, որդեգրել էին ՆՀՄ սկզբունքները և ինտենսիվորեն ներդրել պետական ոլորտում: Բացի այդ, այս երկու պետությունները գտնվում էին տնտեսական անկման վիճակում, երբ նախաձեռնեցին բարեփոխումների փաթեթի իրականացումը: Հարկ է նաև նշել, որ Նոր Զելանդիան երկար տարիներ եղել է Մեծ Բրիտանիայի գաղութներից, և հետևաբար՝ այս գործոնը նույնպես իր ազդեցությունն է ունեցել երկրի հետագա զարգացման վրա<sup>2</sup>:

Մեծ Բրիտանիան և Նոր Զելանդիան մի շարք ընդհանրություններ ունեն հաշվետվողականության և նախարար-քաղձառայող հարաբերություններում, սակայն այս ոլորտում բարեփոխումների տարբեր մոտեցումներ են որդեգրել: Նոր Զելանդիայում ամենանշանակալի բարեփոխումը տեղի ունեցավ 1987 թ. հետո, երբ նախարարները սկսեցին հանձնարարել գործադիր ղեկավարներին սահմանված արտադրողականություն մատուցել, այնուհետև հրապարակայնորեն հաշվետու լինել իրենց կատարողականի համար: Նոր Զելանդիայում քաղձառայության համակարգի բարելավման առանցքային մարմինը Պետական ծառայությունների հանձնաժողովն է (State Services Commission (SSC)), որի ղեկավարը՝ հանձնակատարը, պատասխանատու է այնպիսի գործառույթների համար, որոնք Մեծ Բրիտանիայում բաշխված են տարբեր գործիչների միջև (օրինակ՝ քաղձառայության հանձնաժողով և կաբինետի առանձին հատվածներ): SSC-ը, գանձապետարանի, ինչպես նաև վարչապետի և կաբինետի հետ միասին, կազմում է Նոր Զելանդիայի հանրային ծառայության կորպորատիվ կենտրոնը: Մեծ Բրիտանիայում քաղձառայության բարեփոխումների նախաձեռնողները, ներառյալ՝ ներկայիս կառավարությունը, հաճախ են դիմում Նորզելանդական մոդելի օգնությանը: Այս մոդելի հիմքը պայմանագրային հարաբերություններն են քաղաքականության նպատակներ սահմանող նախարարների և գերատեսչական ղեկավարների միջև, որոնք պատասխանատու են համապատասխան ծառայությունների մատուցման համար, որոնք նպաստում են սահմանված նպատակների իրականացմանը<sup>3</sup>:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա այստեղ ևս իրականացվել են մի շարք նախաձեռնություններ՝ ուղղված պետական-մասնավոր գործընկերության զարգացմանը (այսուհետ՝ ՊՄԳ): Հիմնվելով ՀՀ-ում իրականացված որոշակի վերլուծու-

<sup>1</sup> UK Official Statistics - from New Public Management to Public Value 59th World Statistics Congress of the International Statistical Institute, Hong Kong 25-30 August 2013 Richard Laux, UK Statistics Authority.

<sup>2</sup> [http://www.oecd-ilibrary.org/governance/public-administration-after-new-public-management\\_9789264086449](http://www.oecd-ilibrary.org/governance/public-administration-after-new-public-management_9789264086449)

<sup>3</sup> Origin and theoretical basis of New Public Management, Gernod Gruening International Public Management Journal 4 (2001) 1-25; p.4 Arbeitsbereich Public Management, Hochschule fuer Wirtschaft und Politik, Hamburg, Germany.



թյունների, ինչպես նաև արտասահմանյան փորձի վրա՝ պետք է մշակել ՊՄԳ-ների արդյունավետ զարգացմանն ուղղված գործողությունների նախագիծ՝ սահմանելով ժամանակացույց, պետական գործակալությունների միջև տեղաբաշխելով ռեսուրսները և պարտավորությունները, շահագրգիռ կողմերի միջև հրավիրելով խորհրդակցություն, որին պետք է մասնակցեն նաև մասնավոր հատվածը, միջազգային դոնոր կազմակերպություններ, ֆինանսական հաստատություններ, ՀԿ-ներ: Սիյուռքը ևս պետք է ակտիվորեն ներգրավվի ներկայացվող խորհրդատվական գործընթացներում<sup>1</sup>:

Այն, ինչն այսօր կոչվում է ՆՀԿ, իր արմատներն ունի հանրային կառավարման համաշխարհային գործնական զարգացումներում: ՆՀԿ ծագումը տեսլական է, գաղափարախոսություն կամ մենեջմենթի որոշակի մոտեցումների և գործիքների համակցություն: Այն արդյունավետ գործող գաղափարների խումբ է, որը հայտնի է որպես հանրային կառավարման գիտության մեջ հանրային քաղաքականությունը և հանրային կառավարումը կապող գաղափարական օղակ:

БЕЛА ХАЛАПЯН

## ОСОБЕННОСТИ ПРАКТИЧЕСКОГО ПРИМЕНЕНИЯ НОВОГО ПУБЛИЧНОГО УПРАВЛЕНИЯ В КОНТЕКСТЕ ВНЕДРЕНИЯ ОПЫТА В ВЕЛИКОБРИТАНИИ И НОВОЙ ЗЕЛАНДИИ

*Ключевые слова:* новое публичное управление, менеджериализм, административная реформа, публичная служба, децентрализация, финансовый кризис, фундаментальные принципы

**New Public Management (NPM)** – Новое публичное управление, или «новый менеджериализм», как концепция и модель государственного управления оформился в 80-е годы. Рыночный тип государственного управления выразился достаточно очевидно в административных реформах 80–90-х годов в ряде стран мира. Хорошо известна книга по этой проблеме, опубликованная Дэвидом Осборном и Тэдом Гэблером, «Переосмысливая управление. Как дух предпринимательства трансформирует публичный сектор» [Osborne, Gaebler, «Reinventing Government», 1992]. Наиболее активно рыночная концепция государственного управления разрабатывается в Великобритании, Соединенных Штатах, Новой Зеландии, Канаде и имеет своих сторонников во Франции, Германии, Северных странах, Японии. Это современная модель реформирования общественного управления. Особенности перехода к государственному менеджменту находят выражение в приверженности к действию и изменению, а не устойчивости, определенной норме; в новой критерии эффективности деятельности системы государственного управления, ориентированного на качество услуг и рентабельность. Ключевым вопросом этих тенденций в теории и практике государственного управления является поиск модели эффективного государства и правительства. Новый государственный менеджмент базируется на предпосылках

<sup>1</sup> Հայեցակարգ՝ ՀՀ-ում պետություն-մասնավոր հատված համագործակցություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, նախագիծ, հավելված ՀՀ կառավարության 2008 թ. որոշման:

теории рационального и рыночных установках относительно публичных дел, подчеркивающих конкурентность и возможность выбора, обмен ресурсами и оптимальность.

BELA KHALAPYAN

## PECULIARITIES OF PRACTICAL APPLICATION OF NEW PUBLIC MANAGEMENT IN THE CONTEXT OF INTRODUCTION OF THE GREAT BRITAIN AND NEW ZEALAND ATTEMPTS

**Key words:** *new public administration, managerialism, administrative reforms, public service, decentralization, financial crisis, fundamental principles*

**New Public Management (NPM)**, or new managerialism, as a concept and model of public administration, was created in the 1980s. The market type of public administration was quite evident in the administrative reforms of the 1980s and 1990s in a number of countries around the world. There is a well-known book on this problem, published 1992 by David Osborne and Ted Gaebler, "Reinventing Government," showing how the spirit of entrepreneurship transforms to the public sector. The most active market concept of public administration is developed in the United Kingdom, the United States, New Zealand, Canada and has its supporters in France, Germany, in the Nordic countries, and Japan. This is a modern model of reforming public administration. Peculiarities of transition to public management are expressed in the adherence to the action and change, and not stability in a certain norm. The key issue of these trends in the theory and practice of the government is to find a model of effective state and government. New Public Management is based on the assumptions of the theory of rational and market units regarding public affairs, emphasizing competition and choice, the exchange of the new criteria for the effectiveness of the public administration system, based on quality of service and profitability of resources and optimality.

ՎՌԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հայցորդ, ՀՊՏՀ

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԸ

**Հիմնարարներ.** *աշխատանքի միջազգային բաժանում, տարածաշրջան, առանձնահատկություններ, մասնագիտացում, Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան, Եվրամիություն*

Արտադրական համակարգերի փոփոխությունները, որոնք տեղ են գտնում առանձին ճյուղերի շրջանակներում, հիմքեր են ստեղծում տարածաշրջանային մակարդակներում փոխհարաբերությունների հիմնարար վերանայման համար: Այդ նպատակով անհրաժեշտություն է առաջանում բացահայտելու տարբեր տարածաշրջանային ինտեգրա-